

Ս.Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ «ՀԱՅՈՑ ԴԱՆԹԵԱԿԱՆԸ» ՊՈԵՄՈՒՄ

Քննվում են Հովհ. Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմում գործածված օտար բառերի բառակազմությունը, իմաստային առումները, ցույց են տրվում դրանց ոճական-արտահայտչական երանգավորումները:

Առանցքային բառեր. «Հայոց դանթեականը» պոեմ, օտար բառեր, օտար բաղադրիչով կազմված հայերեն բառեր, գործառական-ոճական բնույթի բառեր, հեղինակային գեղարվեստական խոսքի ոճավորում:

Հովհ. Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմի լեզվին նվիրված մեր նախորդ աշխատանքներում՝ գիտական հանդեսներում լույս տեսած հոդվածներ, թեկնածուական ատենախոսություն, բառապաշարի նորակազմ բառերի բառարան և այլն, հատուկ քննության առարկա չի եղել օտար բառերի գործածության հարցը: Սույն հոդվածում անդրադառնում ենք այդ հարցին: Սակայն նյութի մեծ քանակը (պոեմում գործածված են շուրջ հարյուր հիսուն օտար բառեր կամ օտար բառերի հիմքով հայերեն կազմություններ) հարուցում է որոշակի դժվարություն՝ հոդվածի սահմանափակ էջերում անդրադառնալու համար, ուստի հետագայում կարելի է անդրադառնալ այդ թեմային այլ հոդվածների միջոցով:

Պոեմում գործածված օտար բառերը կարելի է քննել ըստ հետևյալ խմբավորումների:

1. Օտար բառերի բառիմաստային կողմը: Օտար բառերն ըստ բառիմաստային բնույթի ներկայանում են որպես հատուկ կամ հասարակ անուններ. հատուկ անունները՝ տեղանուններ, անձնանուններ, քաղաքական անվանումներ. հասարակ անունները՝ ըստ խոսքիմասային պատկանելության՝ գոյական, բայ, ածական և այլն: Բովանդակության նման բազմազանությունը ամենից առաջ պայմանավորված է պոեմի բովանդակությամբ, գաղափարական նպատակադրումով, իմաստաբանական այն յուրահատկություններով, որոնք գործադրված են պոեմում՝ ստեղծելու երկույթի գեղարվեստական մարմնավորումը:

2. Օտար բառերի բառակազմական կողմը: Օտար բառերը փոխառություններ են, օտար բառով բաղադրված հայերեն նոր բառերը՝ կիսափոխառություններ: Բառակազմության տեսանկյունից երկու կարգի են՝ 1) բառեր, որոնք ուղղակի փոխառություններ են (օրինակ՝ *Ելիզ, վաթան, ենիչար* և այլն), 2) բառեր, որոնք հիմք են հանդիսացել հայերենում կազմելու նոր բառ (օրինակ՝ *Ելի-*

զածոր, անվաթան, ենիչարվել և այլն): Այս աշխատանքում նման բառերից անդրադառնում ենք առաջին տեսակին, քանի որ երկրորդ խմբի բառերը պոեմում գործածվել են տարբեր բաղադրիչներով կազմություններում:

1) Բառեր, որոնք ուղղակի փոխառություններ են: Հանդիպում է 120-ից ավելի նման բառ, միջին հաճախականությունը՝ երեքից չորս, այսինքն՝ պոեմում առկա է օտար բառերի շուրջ չորս հարյուր գործածություն, որը հեղինակային ոճի առումով կարելի է յուրահատկություն համարել: Դրանք, իրենց հերթին, բաժանվում են մի քանի խմբերի՝ առօրյա-գործածական բառեր (հիմնականում գոյականներ), հատուկ անուններ՝ անձնանուն, տեղանուն և այլն, կրոնի, դավանանքի ոլորտի, ռազմական, զինական գործի, պետական-իրավական ոլորտի անվանումներ և ազգ, ցեղ, ժողովուրդ նշանակող բառեր:

ա. Հասարակ գոյականներ: Այդպիսին են հինգ տասնյակից ավելի բառեր, այստեղ նշում ենք նաև մեկ-երկու օտարաբան արտահայտություններ՝ իբրև բառային միավոր. իլլա. «-Լա ա- **իլլա**, ալլահ, / Անմեղ են, վա՛լլահ...» (էջ 61): Փարսադ. «յոթ **փարսադ** մնաց» (էջ 52): Բազրկյան. «Հայն էր **բազրկյան** ու վաճառական» (էջ 112): Թաբուր. «Ինչպես մեզ ասին՝ «Ամելե **թաբուր**»» (էջ 129): Մարմաշ. «Հայոց սրտասև սուգի **մարմաշ**» (էջ 43). «Այս գիշերվա սև **մարմաշի** վրա» (էջ 148): Բուլք. «Այս մի **բուլք** մանկանց գլխին է վկա» (էջ 154): Ղեյլան. «Արևելքն՝ ինչպես ծովսն իր **ղեյլանի**» (էջ 230): Տուտան. «Այնտեղ՝ Դեր Ջորում, այստեղ՝ **տուտանի** վիհերում մթին» (էջ 58): Ցերբեր. «Ժանտ **ցերբերի** պես՝ վրա պրծավ մեզ» (էջ 137): Թասլիմ. «-**Թասլիմ**, գոչեց միահամուռ» (էջ 304): Խալխ. «Խաբված **խալխդ** խելքի կգա՝ / Ետ կքաշվի՝ գանգո վրա...» (էջ 306): Նաշ. «Օ՛, ինչպես **նաշին**՝ ալրափոշին ցանես և ծիլ տա» (էջ 332):

Պոեմում առկա են նաև՝ բալզամ, բաջիք, բիլագուկ, բղեր, դարդ, դինջ, թագրեհ, թայ, լարիրինթոս, լաճ, խաբար, խային, հարեմ, հիդրա, հման, հուռիաթ, դազան, միրաժ, մողոք, շեյթան, սամում, սֆինքս, վամպիր, վեղար, օազիս, օշինդր, օվկիան և այլ բառերով ու բառահիմքերով կազմված բառային միավորներ:

բ. Հատուկ անուններ՝ անձնանուն, տեղանուն և այլն: Նման բառերի գործածության հաճախականությունը, ինչպես մյուս խմբերում, բնականաբար, տարբեր է. առանձնանուն է ընդամենը մեկ տասնյակ բառ. Ախերոն. «Դեպի իմ ճորոխն՝ հայոց **Ախերոն**, / Դեպի **Ախերոն** ու դեպի Քարոն» (էջ 39): Այա. «Սուրբը քերել են, դարձրել... **Այա**» (էջ 59): «Որոնց թլպատեց **Այա** Սոֆիայում» (էջ 153): Եվրոպ. «Թե՛ դու **Եվրոպն** ես՝ լոռության սուգով» (էջ 32): «Իր մեջ է, ասես, **Եվրոպն** անսարսուռ» (էջ 228): Եփրատես. «Ու մոնչում էր, ավերն էր կրծում **Եփրատեսը** հայ» (էջ 217): Էնվեր, «**Էնվեր** ու Թալեաթ, Ջեմալ ու Նազրմ՝ բահերն ալլահի» (էջ 296): «Տեսանք հայակեր փաշային **Էնվեր**» (էջ 115): Թալեաթ. «Ո՛վ **Թալեաթ**

Քարոն» (էջ 73): «Էնվերու *Թալեաթ*, Ջեմալ ու Նազըմ՝ բահերն ալլահի» (էջ 296): «Ա՛խ, անգոռ սասկեք, իթթիհա՛տ, *Թալեաթ*» (էջ 153): Թուրան. «ցեղը *Թուրանի*» (էջ 135): Իթլ. «Մերն է *Իթլ* գետն էլ մեր հին» (էջ 67): Նազիմ. «*Նազիմն* ասել է՝ «Արյունն էրմանի / Ծով էլ որ թափենք՝ կես շիթ գին չունի»» (էջ 133): «Էնվեր ու Թալեաթ, Ջեմալ ու *Նազըմ*՝ բահերն ալլահի» (էջ 296): Ջեմալ. «Էնվեր ու Թալեաթ, *Ջեմալ* ու Նազըմ՝ բահերն ալլահի» (էջ 296):

գ. Կրոնի, դավանանքի ոլորտի անվանումներ: Այստեղ կան բառեր, որոնց գործածության հաճախականությունը բարձր է (*ալլահ, գյավուր, դուրան* և այլն). առանձնանում են շուրջ երկուսուկես տասնյակ բառեր. ալլահ. «Թե *ալլահ* լիներ՝ նա էլ կճչար» (էջ 138): Այա. «Սուրբը քերել են, դարձրել... *Այա*» (էջ 59): Անոպա. «Սուտ քրիստոնյա շքեղ... *անոպան*» (էջ 60): Բեդլին. «*Բեդլինի* հայ կինն այսպես պատմեց» (էջ 103): Գաֆուր. «-Ո՛ւմ եղբորը, խային գյավուր,- /ճչաց ուրիշ թուրք մի՝ *գաֆուր*» (էջ 307): Գյավուր. «Ա՛ն, *գյավուր*, - ասին» (էջ 74): Իսլամ. «Մի՞թե *իսլամը* հրամայում է խոտորել ճամփան» (էջ 90): Ղուրան. «Մի՞թե վառած կանք մենք գեթ մի *Ղուրան*» (էջ 90): Մահմեդ. «Մինչ սև *մահմեդներն* ասկյարներ դառած» (էջ 298): Մեչիդ. «Մի՞թե Իտալիա, օ՛, հիշի՛ր, Դա՛նթե, այրել է *մեչիդ*» (էջ 90): Մզկիթ. «Դինջ է *մզկիթը*...» (էջ 94): Մինարե. «Գեթ մի *մինարե*՝ քանդած կա՛» (էջ 90): Մուլա. «Երբ առաջ անցանք՝ ինչ-որ մի *մուլա*» (էջ 66): Նամագ. «*Նամագ* էր անում» (էջ 61): Նաշ. «Օ՛, ինչպես *նաշին*՝ ալրըափոշին զանես և ծիլ տա» (էջ 332): Նեռ. «յոթնահեղ ժանտ է, մեղքերով այս *նեռ*» (էջ 87): Շեյթան. «Քերթել որդուն էլ *շեյթանի* ջաղվի» (էջ 100): Ջհան-դամ. «Նա դրախտի տեղ *ջհանդամ* կգնա» (էջ 135): Ջհանդամդարասի. Այս ձեր գերեզման *ջհանդամդարասին* ալլահն է փորել (էջ 296): Ջեններթ/ջեննաթ. «Ջնջեք *ջեններթով*՝ կրոնով ջնջեք վերջին սերմն հայի» (էջ 247):

դ. Ռազմական, զինական գործի անվանումներ: Այստեղ էլ կան համեմատաբար հաճախակի գործածվող բառեր (*ասկյար, ենիչար, յաթաղան* և այլն). առանձնանում է մեկ տասնյակից փոքր-ինչ ավելի բառ. աշիրաթ. «Ասես դեռ քրդաց *աշիրաթներից* ահ էին քաշում» (էջ 282): Ասկյար. «Առևանգել էր *ասկյարը* դժնի» (էջ 73): Բայրախտար. «Մեր Դրոշ գյուղով, / որ *Բայրախտար* էր դառել երկյուղով» (էջ 105): Դուշման. «Ախր էրմանին *դուշման* չէր մեզի» (էջ 61): Ենիչար. «*Ենիչար* մի չար, որ հանեց ահով» (էջ 145): Զուլում. «մեզ *զուլում* բերին» (էջ 407): Թուր. «-Չքվե՛ք, գյավուրներ՛ր, ալլահն *թուր* ունի. / Ձեր Աստվածն ի՞նչ է, երբ որ *թուր* չունի» (էջ 25): Խուժան. «Վարից ընչաքաղց *խուժանն* է խուժում» (էջ 144): Հայդուկ. «Մեզ էլ *հայդուկի* ոգի էր տալիս» (էջ 220): Յաթաղան. «Պատյա՛նդ չքվիր, ո՛վ ժանտ *յաթաղան*» (էջ 157): Զիհատ. «Ջնջել *ջիհատի* կրոնականով» (էջ 193):

ե. Պետական-իրավական ոլորտի անվանումներ: Այս խմբում զգալի է հատկապես *գյավուր, գենցիդ, Ելդգ, Իթթիհատ, փաշա* բառերի գործածությունը: Իսկ ընդհանուր առմամբ կա երկու տասնյակից փոքր-ինչ ավելի նման բառ. Բարբարոս. «ո՛վ մութ **բարբարոս**» (էջ 108): Գայիսոն. «Օլոքը ձեռքին, **գայիսոնի** պես» (էջ 126): Գայմագամ. «-Գյավուր,- մոնչաց **գայմագամը** թուրք» (էջ 244): Գաֆուր. «-Ո՛ւմ եղբորը, խային **գյավուր**,- / ճչաց ուրիշ թուրք մի՛ **գաֆուր**» (էջ 307): Գեն. «-**Գեն** սպանող է հայտնվել, ազգեր» (էջ 48): Գենցիդ. «Այն էլ **գենցիդն** այս դժոխաքեն» (էջ 135): Ելդգ. «Դառած մի **Ելդգ**, դառած *իթթիհատ*» (էջ 112): Թոհ ու բոհ. «Անե՛ծք քուրմերին **թոհ ու բոհերի**» (էջ 97): Իթթիհատ. «Դառած մի Ելդգ, դառած **իթթիհատ**» (էջ 112): Կայսր. «Քո Վիլիելմ **կայսեր** գազազուն գոչ և ո՛վ կմոռանա» (էջ 160): Մամոնտ. «Ոչ մի **գահ-մամոնտ** մի ձայն չհանեց» (էջ 335): Մենտոր. «Եվ ահա **մենտոր** լուսինը ելավ» (էջ 200): Մողոք. «Հայտնվեց՝ հնուց ոսոխ **մողոքին**» (էջ 286): Սուլթան. «**Սուլթանի** լաճերն հայ արյան ծովից անցան նավակով...» (էջ 256): Վաթան «Այս Հայաստանը մեզ **կվաթանվի**» (էջ 39): Վալատ. «Ու տանում էի ես, դառած **վալատ** / Մեծ հոգիներին հայոց դատի» (էջ 153): Փաշա. «Եվ գլխատեց ժանտ **փաշային**» (էջ 322): Փասպանդ. «-Սպանվեն պիտի՛ իշխան, թե՛ **փասպանդ**» (էջ 92): Փարդա. «Հուր **փարդի** ետև էլ չենք համբերի» (էջ 12): Քարոն «Երեք գլխանի ահեղ մի է **Քարոն** / Դառած մի Ելդգ, դառած *իթթիհատ*» (էջ 112):

գ. Ազգ, ցեղ, ժողովուրդ նշանակող բառեր: Առանձնանում են նման բովանդակությամբ մեկ տասնյակից քիչ ավելի բառեր: Հաճախակի են գործածված *էրման, սելջուկ, օսման* և այլ բառերը. Աշար. «Յեղն **աշար** ցեղիդ» (էջ 196): Գերման. «Սև սուլթանուհին **գերման** անկողնի» (էջ 126): Էրման. «Կաղկանձելով՝ «Ա՛խ. **էրմանի**»» (էջ 319): Էրման-քյասան. «Օսմա՛ն, զորքով՝ **էրման-քյասան**» (էջ 321): Թուրք. «Ու գլորվեց ասկյարը **թուրք**» (էջ 319): Հոտենտոտ. «Եղկ **հոյրենպոդի**» (էջ 118): Սելջուկ. «**Սելջուկի** պես ձեր նախաթուրք» (էջ 318): Ջհուդ. «-Հա՛ն հորածներդ, **ջհուդ** էրմանի» (էջ 283): Ուռուս. «Բե՛ր ոսկեղենդ՝ զուր եք սպասում **ուռուսի** գալուն» (էջ 284): Օսման. «**Օսմա՛ն**, զորքով՝ էրման-քյասան» (էջ 321):

2) Բառեր, որոնք հիմք են հանդիսացել հայերենում կազմելու նոր բառեր, որի արդյունքում՝ գոյական, ածական և բայ (օրինակ՝ *ելդգածոր, անվաթան, ենիչարվել, սուլթանուհի* և այլն). պոեմում կա նման կազմությամբ 36 բառի գործածություն. դրանք, իրենց հերթին, կարելի է խմբավորել.

1. Օտար բառի հիմքով կազմված գոյականներ, ընդ որում՝ դրանք հողակապով կամ առանց հողակապի բաղադրված բառեր են, հողակապով կազմված բառերի բաղադրիչները կա՛մ սովորական բառեր են, կա՛մ է՛լ բաղադրիչներից մեկն ու մեկը հատուկ անուն է: Նկատի ունենալով նման տարբերությունները՝ այս խմբի բառերը կարելի է ներկայացնել երեք ենթախմբով.

ա. Հոդակապով բառեր, որոնց բաղադրիչները հաճախ հանդիպող բառեր են՝ *թուրքազորք, թուրքայաթաղան. իսլամասյուն. (բրոնզա)շամդան: Թուրքազորք. «Գոռաց վերևից թուրքազորք հորդան»* (էջ 296): *Թուրքայաթաղան. «Փախան դժոխքից թուրքայաթաղան»* (էջ 300): *Իսլամասյուն. «նիզակաձև իսլամասյուներ»* (էջ 59): *(Բրոնզա)շամդան. «բրոնզաշամդան մոմակալն անգամ»* (էջ 185):

Ընդ որում՝ բերված օրինակներից մի քանիսը՝ *թուրքազորք «թուրքական զորք՝ զինուժ»*, *թուրքայաթաղան «թուրքական յաթաղան՝ զենք»*, բնագրային կիրառությունից դուրս գոյականներ են, սակայն բնագրում հանդես են եկել ածականի իմաստով, օրինակ՝ *«Գոռաց վերևից թուրքազորք հորդան»* (էջ 296): *«Փախան դժոխքից թուրքայաթաղան»* (էջ 300) և այլն:

բ. Հոդակապով բառեր, որոնց բաղադրիչներից մեկն ու մեկը հատուկ անուն է՝ *Ելոգ, Էնվեր, Թալեաթ, Հիսուս: «Երբ ելոգաձոր Չանդրից հեռու»* (էջ 241): *«Մի հոտ՝ ետևից հովվի տեղ՝ զորքեր / (Էնվերազորքեր՝ գերմանազրահ...»* (էջ 293): *«Հայախեղդ վիհը թալեաթաթուրքի աչքի պես անգութ»* (էջ 298): *«Ասես ներսում էլ հիսուսամահի օր էր մեռելոց»* (էջ 105):

գ. Անհոդակապ կազմություններ. հանդիպում է մի քանի բառ՝ կազմված կա՛մ կրկնությամբ, կա՛մ իբրև կցական բարդություն՝ զուռնանաղարա. *թուրսամում, հայդուկ-մայդուկ: «Չուռնանաղարան մեր վրա խնդաց»* (էջ 290): *«Բայց քամին էլի թուրսամումի պես գալիս էր խոլոր»* (էջ 331): *«Հայդուկ-մայդուկ, խուժան-մուժան, / Բայց կովում են գայլից դաժան»* (էջ 321):

դ. Ածանցավոր բառ. հանդիպում է նման կազմությամբ միայն *սուլթանուհի* բառը. *«Սև սուլթանուհիդ գերման անկողնի»* (էջ 126, 162):

2. Օտար բառի հիմքով կազմված ածականներ.

ա. Կազմված *ան* նախածանցով՝ *անհիսուս, անվաթան. անքարոն. «Ով դեռ Հիսուսի վեղարներ հագած անհիսուս ազգեր»* (էջ 122): *«Հայաստանը մեզ վաթանվի՛/ Որ անվաթան վրեժն հանվի...»* (էջ 67): *«Դեպի Դեր Ջորի դժոխքն անքարոն»* (էջ 39):

բ. Կազմված *-յան* և *ական* ածանցներով. *Էպիկուրյան. «Գավաթն հայ էպիկուրյան»* (էջ 150): Տոտեմական. *«Այս հող ու ջրից իմ տոտեմական»* (էջ 233):

գ. Կազմված գոյական-գոյականով կամ գոյական-բայարմատով, ընդ որում՝ *ա-* հոդակապով. *ամայաշվար, դժոխաքարոն, հիսուսադրուժ, յաթաղանաբեր, յոթնավիլայեթ. «Հացեկաց գյուղն էր ամայաշվար»* (էջ 285): *«Յաթաղանի դեմ դժոխախենջար»* (էջ 299): *«Եվ այս մողոքի դժոխաքարոն հետքերը բռնած»* (էջ 51): *«Ազգեր ու ցեղեր՝ Հիսուսադրուժ»* (էջ 123): *«Ա՛խ, չեն հեռանում յաթաղանաբեր ցավերն հայ դոնից»* (էջ 299): *«Շղթա են հողիս յոթնավիլայեթ»* (էջ 43):

դ. Պոռնում գործածվել է *բրոնզաշամդան* (աժ. բրոնզե շամդան (պրսկ. շեմդան «ատրուշան. կրակարան»), բրոնզածույլ աշտանակ հիշեցնող) բարդ

բառը, որը հեղինակային նորաբանություն է, բաղադրիչները օտար բառեր են՝ մեկը հին, մյուսը համեմատաբար նոր փոխառություններ: Օրինակ՝ «**Քրոնզաշամդան** մոմակալն անգամ / Հալվել-թափվել է մի մոմի նման» (185):

3. Օտար բառի հիմքով կազմված բայեր.

ա. Կրավորական *-վ-* մասնիկով բայական կազմություններ. *աբելվել, ագրահլվել, ենիչարվել, կայենվել, մահմեդվել, մենսորրվել, չեթեյվել*. «Իմ հայ **աբելված** ազգին կայենված մի նեռ» (էջ 122): «Վրա հասեք **ագրահլված**» (էջ 314): «Իր **ենիչարված** քաջ որդոցն հիշե» (էջ 101): «Ձորքով **կայենված**, մահմեդված Բելին» (էջ 122): «Ձորքով **կայենված**, **մահմեդված** Բելին» (էջ 122): «Մեծ Խորենացին **մենսորրվում** էր մեզ» (էջ 85): «Բնաջնջեցին զորքով **չեթեյված**» (էջ 206):

բ. Անօրյա-գործածական՝ անորոշ դերբայի *-ել* մասնիկով կազմություններ. *ազանել, զոռել, թագրեհել*. «Վեր՝ մուզեհինից՝ **ազանեց**. «Ալլա՛հ, / Առանց վաթանբավ է լացենք (էջ 66): «Գոռում էին, արդեն **զոռում**, / Հայ մի բուռն էլ՝ **զոռում** զորքին» (էջ 311): «Հայ ստինքները **թեգրեհեց** թելին» (էջ 122):

Եզրակացություն: Հովհ. Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմում հեղինակի կողմից օգտագործվել են շուրջ հարյուր հիսուն օտար բառեր կամ օտար բառերի հիմքով կազմված դիպվածային բառեր ու բառային միավորներ, որոնք նպաստել են պոեմի բառապաշարի կատարելությանը՝ ստեղծելով ներկայացվող իրողությունների պատկերավորման ուրույն բնութագրումներ և ոճական-արտահայտչական երանգավորումների ինքնատիպ դրվագներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Հովհաննես Շիրազ**, Հայոց դանթեականը, Երևան, 1991, էջ 338:
2. **Համբարձումյան Ս.Վ.**, «Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմի բառապաշարը» (թեկնածուականատենախոսություն, ձեռագիր, 2013թ.):
3. **Համբարձումյան Ս.Վ.**, Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմի նորակազմ բառերի բառարան, Ե., 2016:

С.В. АМБАРЦУМЯН

ПРИМЕНЕНИЕ ИНОЯЗЫЧНЫХ СЛОВ В ПОЭМЕ ОВАНЕСА ШИРАЗА “АРМЯНСКАЯ ДАНТЕИДА”

Исследуются словообразование иноязычных слов, используемых в поэме Ованеса Шираза “Армянская дантеида”, их смысловые значения, показаны стилистически выразительные оттенки.

Ключевые слова: поэма Ованеса Шираза “Армянская дантеида”, иноязычные слова, армянские слова, составленные из иноязычных компонентов, слова с функционально-стилистической окраской, стилизация авторской художественной речи.

S.V. HAMBARDZUMYAN

THE USE OF FOREIGN WORDS IN HOVHANNES SHIRAZ'S POEM
"ARMENIAN DANTEIDA"

The word formation principles of foreign-words used in H. Shiraz's poem "Armenian Danteida" are considered, their stylistic, expressive shades are shown.

Keywords: Hovhannes Shiraz's poem "Armenian Danteida", the use of foreign words, simple words, words with functional and stylistic coloring, thematic groups of words, true foreign words, word formation of new components of foreign words, stylization of the author's artistic speech.

ՀՏԴ 82-94:821.19

Մ.Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԻՋԲԸ

20-րդ դարի հայ հուշագրությունը, ազգային ճակատագրի բերմամբ, շարունակողը լինելով 5-րդ դարից սկիզբ առնող ավանդների և տեղավորվելով համաշխարհային հուշագրության զարգացման միտումների ծիրում, միևնույն ժամանակ ստացավ զուտ ազգային մի այնպիսի երանգ, որ հատուկ չէ այլ ազգերի հուշագրություններին: Ունենալով հանդերձ միասնական ներքին անքակտելի տրամաբանություն՝ տարբերակվեց խորհրդահայի և սփյուռքահայի:

Առանցքային բաներ. հուշագրություն, վտարանդի, սփյուռքահայ, խորհրդահայ, ազգային մշակույթ:

Ներածություն: Ի տարբերություն ռուսական վտարանդիության, որ առաջին փուլում (1918-1940թթ.) երկու միլիոնից ավելի էր և կենտրոնացել էր հատկապես եվրոպական խոշոր քաղաքներում և ռուսական Խարբինում [1], հայ իրականության մեջ հանգամանքները միանգամայն այլ էին: Նախ՝ հայությունը հարյուրամյակներից ի վեր արդեն իսկ սփռված էր աշխարհով մեկ և ստեղծվել էին մշտապես ուժացվող հայկական գաղթօջախներ [2]: Լայն առումով՝ գաղթահայության երևույթը հայ գրականության մեջ դրսևորվել էր դեռևս միջնադարից եկող պանդխտության երգերի տեսքով: Երկրորդ՝ Մեծ եղեռնից հետո արևմտահայ վերապրածների մի զգալի զանգված ևս հայտնվեց պատմական հայրենիքից հեռու, և դա ամենևին կապ չունեի քաղաքական դրդապատճառներով արտասահմանում հանգրվանելու՝ վտարանդիության հետ, ինչպիսին ռուսական և ուկրաինական, նաև՝ Ռուսական կայսրության այլ ժողովուրդների քաղաքական էմիգրանտներն էին, որոնք ստեղծեցին իրենց ուրույն գրականությունները: Հայկականի պարագայում, փոքր վերապահությամբ, չէր կարող լինել վտարանդիա-